ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Քաջարան համայնքի ղեկավար՝

Մ. Փարամազյան

ՔԱՋԱՐԱՆ 2024

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2025թ բնապահպանական ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք՝

առաջնորդվելով Քաջարան համայնքի զարգացման 2018-2022 թթ ծրագրի դրույթներով,
հիմք ընդունելով ՀՀ ջրի ազգային ծրագիրը
համոզված լինելով, որ համայնքի կայուն զարգացումը էապես կախված է բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծումից,
գիտակցելով հասարակության առողջության պահպանման առաջնահերթությունը
կարևորելով բնապահպանական ծրագրերի շարունակականությունը, ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք :
2. ՀՀ շրջակա միջավայրի նախարարի «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» 04.09. 2023թ N 310-Ն հրաման:
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք :
4. Քաջարան համայնքի զարգացման 2018-2022 թթ հնգամյա ծրագիր:

ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- ՀԱՄԱՅՆՔԸ ԴԱՐՁՆԵԼ ԿԼԻՄԱՅԻ ԳԼՈԲԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՎԵԼԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ
- ԲԱՐԵԼԱՎԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ
- ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 1 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՑԱԾՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1. Բարձրացնել համայնքի ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը

- **Իրավիճակի նկարագրություն և ծրագրի անհրաժեշտությունը**

Համայնքի գյուղական բնակավայրերը ոռոգման, ինչպես նաև կենցաղային նպատակնե-րով հիմնականում օգտագործում են Ողջի և Գեղի գետերի և նրանց վտակների ջրերը: Գյուղական բնակավայրերի մեծ մասում խմելու ջրամատակարարման և ոռոգման համակարգերը կառուցված են տարերայնորեն, կառուցվածքները հին են և քայքայված, ջրաբաշխումը իրականացվում է անհավասարաչափ: Այս իրավիճակը հանգեցնում է համակարգերում ջրի մինչև 60% կորստի, բնակիչների իրավացի դժգոհությունների՝ ջրի և անհավասարաչափ բաշխման և անբավարարության պատճառով:

Առկա տեխնիկական հարցերը, ինչպես նաև կլիմայի գլոբալ տաքացմամբ և լեռնային գետերի վրա փոքր հիդրոկայանների առկայությամբ պայմանավորված խնդիրները առաջնահերթ անհրաժեշտություն են դարձրել ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղված միջոցառումների իրականացումը:

Գեղի գյուղի բնակիչները խմելու և կենցաղային, ինչպես նաև ոռոգման նպատակով օգտագործում են գյուղի միջով հոսող, Գեղի գետի վտակ Գեղանուշ (Պահագետ) գետակի ջրերը: Գյուղի **108** տնտեսությունների մոտ **40 հա** վարելահողերը, ներառյալ տնամերձերը և այգիները, ջրովի են: Ոռոգումը գյուղացիները կազմակերպում են անհատապես՝ գետակից դեպի հողամասեր առուներ անցկացնելու միջոցով:

Չհամակարգված և անկազմակերպ ոռոգման եղանակը տարվա սակավաջուր շրջանում առաջացող ջրի անբավարարության պատճառներից մեկն է, հատկապես՝ ավելի ցածրադիր տնային տնտեսությունների և հողամասերի համար: Այս հանգամանքը գյուղում լարված

սոցիալ-հոգեբանական վիճակի ստեղծման և արդար դժգոհությունների առաջացման պատճառ է հանդիսանում:

Ջրի անբավարարության մյուս պատճառը լեռնային գետերի հովիտներում հաճախակի հանդիպող ենթահունային հոսքերն են: Տարվա սակավաջուր ամիսներին Գեղանուշ (Պահագետ) գետի մակերևութային հոսքը նվազում է և հորիզոնը երբեմն իջնում է մինչև զրոյական մակարդակի, և մոտ 1կմ երկարությամբ, մինչև Գեղի գետի հետ միախառնման կետը, գետի հունով մակերևութային հոսք չի իրականանում: Սրան, իհարկե, նպաստում է նաև վերը նշված՝ գետից ոռոգման նպատակով իրականացվող անկանոն ջրառը:

Գյուղի կառուցապատված հատվածում հունի կողերը ամրացված են բետոնե հենապատերով՝ գետի հորդացման և վարարումների ժամանակ կողային ողողամաշումը բացառելու նպատակով: Հենապատերը տեղ-տեղ քայքայված են, որոշ հատվածներում բացված են հենապատերի հիմքերը և հենապապատերի ամբողջական փլուզման վտանգ է առաջացել: Այս հանգամանքը էական ռիսկ է պարունակում գետի ափերի երկայնքով կառուցված տների, տնտեսությունների և ընդհանրապես բնակիչների համար:

- **Ծրագրով նախատեսվող գործողություններ.**
  1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում
  2. Գեղի գետի Գեղանուշ (Պահագետ) վտակի 250մ հունի մաքրում բերվածքներից գյուղի տարածքում
  3. Գետի հունի կարգավորման նպատակով նոր բետոնե վաքի կառուցում
  4. Մակերևութային և ենթահունային ջրերի ջրընդունիչ հանգույցի կառուցում
  5. Կողային բետոնե հենապատերի ամրացում
  6. Ոռոգման ջրի մատակարարման խողովակաշարի անցկացում
  7. Կողային հենապատերի վրա անվտանգային մետաղական ճաղավանդակի կառուցում

- **Ակնկալվող արդյունքները՝**

1. գետի ջրերի օգտագործման արդյունավետությունը կբարձրանա. ջուրը հավասարապես կբավարարի բոլորին
2. կնվազի ջրի անբավարարության պատճառով գյուղում առաջացող սոցիալական լարվածությունը
3. գետը իր հունի ամբողջ երկայնքով, մասնավորապես՝ գյուղի կառուցապատված հատվածում, մշտական մակերևութային հոսք կունենա, ինչը կարևոր է նաև սամիտարահիգիենիկ պայմանների բարելավման առումով,
4. կնվազեն գետի վարարումների և հորդացումների հետևանքով առաջացող անվտանգային ռիսկերը,
5. հետագայում առավել կհեշտանա գետի հունի մաքրման աշխատանքները:
6. կբարձրանա լեռնային սահմանամերձ գյուղում ապրող մարդկանց կենսամակարդակը

- **Ծրագրի շահառուները**

Ծրագրի ուղղակի շահառուներն են՝

ա) գյուղի 108 տնտեսությունները՝ 280 բնակչությամբ

բ) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Գետի գյուղում բնակություն հաստատած 23 ընտանիքները

գ) գյուղում գյուղացիական տնտեսություններ հիմնող գործարարները (տարածքը հետաքրքրություն է ներկայացնում հատկապես այգեգործության համար)

Անուղղակի շահառուներն են՝

ա) համայնքապետարանը՝ լիազորությունների իրացման կարողությունների ուժեղացման առումով

բ) համայնքի բնակիչներն ու հյուրերը՝ գյուղում ստացված էկոլոգիապես մաքուր մթերքները հիմնականում ներքին սպառում ունեն,

գ) բնությունը՝ կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում ջրային ռեսուրսների պահպանությունը առաջնահերթ խնդիր է:

- **Կապը այլ ծրագրերի հետ**

ա) Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիր

բ) ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագիր

գ) «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք

դ) Քաջարան համայնքի զարգացման 2023-2027թթ ծրագիր

- **Ծրագրի արժեքը՝ 285516,0 հազ դրամ**
  Համաֆինանսավորումը՝

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ, բայց բնապահպանական մասհանումներով չծածկվող մասը կհամաֆինանսավորի համայնքը՝ սեփական եկամուտների հաշվին:

Գյուղի տարածքում գետի հունի մաքրման աշխատանքները կիրականացվեն համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ:

Հիմնախնդիր 2. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Խնդիր 1. Համայնքի բժշկական կենտրոնի կարողությունների զարգացում

Համայնքի բնակչությանը Քաջարանի բժշկական կենտրոնի կողմից մատուցվող բժշկական ծառայությունների որակը բարձրացնելու, ծառայությունների սպեկտրը ընդլայնելու և մատչելի և հասանելի դարձնելու նպատակով համայնքապետարանը Ծրագրի շրջանակներում պարբերաբար տեխնիկական աջակցություն է ցուցաբերում բժշկական կենտրոնին:

Աջակցության անհրաժեշտ ուղղություններն ու ձևերը քննարկվում են բժշկական կենտրոնի ղեկավարության և աշխատակիցների հետ:

- **Գործողություն.**

Բժշկական սարքավորումների ձեռք բերում

ա) շարժական ռենտգեն ապարատի ձեռք բերում
բ) հիվանդի վիճակի վերահսկման բազմաֆունկցիոնալ մոնիտորի (կապնոգրաֆ) ձեռք բերում
գ) դեֆիբրիլյատորի ձեռք բերում

- **Ակնկալվող արդյունքները**

1. մատուցվող բժշկական ծառայությունների ընդլայնում
2. մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում
3. տեղում բուժսպասարկում ստացողների թվի ավելացում
4. լիարժեք կդրսևորվեն բժիշկների ունակություններն ու հմտությունները

- **Ծրագրի շահառուները**

1. համայնքի բոլոր բնակիչները
2. Քաջարանի բժշկական կենտրոն դիմող այլ համայնքների բնակիչները
3. Բժշկական կենտրոնի բուժանձնակազմը:

- **Ծրագրի արժեքը՝ 16000,0 հազ ՀՀ դրամ**

Շրջ. միջավայրի պահպանության, գյուղատնտ.,
տնտեսական զարգացման և ծրագրերի բաժնի պետ՝ Գ. Գաբրիելյան

Համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

30.05.2024թ

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Քանակը	ԳՈՒՄԱՐԸ հազ.դրամ	Ֆինանսավորման աղբյուր Հազ. դրամ		ծանոթություն
				պետություն	համայնք	
1	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ**		**285516,0**	**256615,23**	**28900,77**	Կից ներկայացվում ենք նախագծանախահաշվային փաստաթղթերը: Փաստաթղթերը փորձաքննության անցման փուլում են:
1"1	*Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, փորձաքննություն*	ծավալ	5000,0	-	5000,0	
1.2	*Գեղանուշ (Պահագետ) գետի հունի կարգավորման և կողային հենապատերի ամրացման, ջրընդունիչ հանգույցի կառուցման, որոգման խողովակաշարի անցկացման աշխատանքներ*	ծավալ	280516,0	256615,23	23900,77	
2	**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**		**16000,0**	**16000,0**	**-**	Անհրաժեշտ սարքավորումների ցանկը ներկայացրել է Քաջարանի բժշկական կենտրոնը: Սարքավորումների գները սահմանվել են գնահարցման և ներքին շուկայի ուսումնասիրության արդյունքներով:
2.1	Բժշկական սարքերի ձեռք բերում					
	- *շարժական ռենտգեն ապարատի ձեռք բերում*	1 հատ	12000,0	12000,0	-	
	- *հիվանդի վիճակի վերահսկման բազմաֆունկցիոնալ մոնիտորի (կապնոգրաֆ) ձեռք բերում*	1 հատ	2500,0	2500,0	-	
	- *դեֆիբրիլիատորի ձեռք բերում*	1 հատ	1500,0	1500,0	-	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ		**301516,0**	**272615,23**	**28900,77**	